## ԿԱՐԾԻՔ

Տաթևիկ Վարդանի Ենոքյանի «Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորումը մայրենիի դասերին» ատենախոսության մասին

Ժամանակակից գիտության զարգացումը, հասարակական-քաղաքական հարաբերությունների առաջընթացը իրապես ազդում են մանկավարժական գոյավիճակների կատարելագործման վրա՝ առաջ բերելով տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և սովորողների հաղորդակցական կարողությունների ձևավորման անհրաժեշտություն: Այս համածիրում, կարծում ենք, արժևորվում է կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների դերը, որովհետև դրանք դիտարկվում են աշակերտների ճանաչողական հետաքրքրությունների և պահանջների բավարարման տեսանկյունից:

Տաթևիկ Վարդանի Ենոքյանի «Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորումը մայրենիի դասերին» խորագրով ատենախոսությունը շարադրված է ոչ միայն արդի մանկավարժության նորովի լուծումների, այլ նաև սովորողների հոգեբանական առանձնահատկությունների, անձնակողմնորոշիչ կրթական միջավայր ստեղծելու հաշվառումով: Ատենախոսն իրավացիորեն ընդգծում է, որ տարրական դպրոցում մայրենիի ուսումնասիրման ընթացքում ապահովվում է սովորողների հաղորդակցական կարողությունների ձևավորումը, նրանց հոգեկան գործընթացների և բարձրակարգ մտածողության բաղադրիչների զարգացումն ու ամրակայումը:

Հետազոտության նյութ դարձնելով կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացը՝ ատենախոսը մշակել է թեմայի արդյունավետությունը բարձրացնող մեթոդական ընդգրկուն համակարգ, որի ներդրումն ու կիրառումը հանրակրթության մեջ կբացահայտի դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացման ուղղությամբ մայրենիի դասերի հնարավորությունները, որոնք կիրականացվեն կրթական

բարենպաստ միջավայրում որպես կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացման էական նախապայման:

Գիտխորհրդի դատին ներկայացված սույն ատենախոսությունը կազմված է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող դիդակտիկական և կառուցվածքային պահանջներով: Այն բաղկացած է ներածությունից, իրար փոխլրացնող երեք գլխից, եզրակացություններից, առաջարկներից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ներածության մեջ խոսվում է թեմայի արդիականության, հետազոտության նպատակի, մեթոդների ու եղանակների, տեսական և գործնական նշանակության մասին:

Առաջին գլխում ներկայացված են հիմնախնդրի ուսումնասիրման գիտատեսական և մեթոդաբանական հիմունքները: Այստեղ կարևորվում են կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացի հիմնաբաղադրիչները, գիտական մոտեցումները, ինչպես նաև այդ գործընթացի սուբյեկտների փոխներգործուն դաշտը՝ որպես հաղորդակցական կարողությունների զարգացման միջոց:

Երկրորդ գլուխը, որն աշխատանքի էական հատվածներից է, կրում է «Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացի բովանդակությունը և դրա առանձնահատկությունները» խորագիրը: Ըստ էության վերլուծված են «Մայրենիի» գործող առարկայական չափորոշիչը, ծրագիրը, կարևորված է տարրական դպրոցում դասավանդվող այլ առարկաների դերը աշակերտների հաղորդակցական կարողությունների և կապակցված խոսքի զարգացման գործընթացում: Ճիշտ է նկատված, որ դասագրքերում զետեղված տարաժանր գեղարվեստական ստեղծագործությունների շուրջ աշխատանքը կարող է նպաստել սովորողների հաղորդակցական կարողությունների զարգացմանը, եթե դրանք մեթոդապես ճիշտ են իրականացվում: Աշակերտներն ամենից առաջ այդպիսի նյութերի ուսումնասիրման, երկխոսությունների դիտարկման,

նկարագրությունների կատարման ճանապարհով պիտի հասնեն հաղորդակցական կարողությունների զարգացմանը: Նշվում է, որ ուսումնասիրման գործընթացում կիրառելի են տարաբնույթ մեթոդներ (դիտում, զրույց, վարժությունների կիրառման մեթոդ և այլն). արդյունքում արձանագրվել են դրանց տվյալները, կառուցվել գնահատողական սանդղակներ: Հարկ է նշել, որ ուսուցիչները թեև հիմնականում կարևորում են կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացման անհրաժեշտությունը, սակայն նրանց մի մասը հստակ չի տարորոշում, թե հաղորդակցական կարողությունը ի՛նչ բաղադրիչներ ունի, և այդ ուղղությամբ ի՛նչ բնույթի աշխատանքներ են անհրաժեշտ ի կատար ածել: Ուշագրավ է, որ ատենախոսը հաղորդակցական կարողությունների ձևավորման տեսանկյունից ներկայացրել է կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունները, բացահայտել սովորողների ակտիվ և պասիվ բառապաշարի մակարդակները, խոսքի մասերի գործածության հաճախականությունը խոսքաշղթայում:

Ատենախոսը, հիմք ընդունելով կատարված հետազոտությունը, փորձարկվող և ստուգիչ ձևաչափով ցուցադրել է կրտսեր դպրոցականների բառապաշարի և խոսքի զարգացման տարամակարդակները, նրանց խոսքային գործունեության համապատկերը:

Հետաքրքրական իրողություններ են վեր հանվում հետազոտության երրորդ՝ «Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման մեթոդական համալիրը մայրենիի դասերին» գլխում: Անդրադարձ է կատարված մայրենիի դասագործընթացում կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման մեթոդական համալիրին: Այստեղ քննության առարկա են դարձել սովորողների հաղորդակցական կարողությունների զարգացումը տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ, ուսումնական երկխոսությունները և իրադրային խաղերը՝ որպես կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացման միջոցներ: Հիմք ընդունելով սույն ուսումնամեթոդական համալիրը՝ ատենախոսը համակողմանիորեն ներկայացնում է

փորձարարության արդյունքների վերլուծությունն ու ամփոփումը: Ատենախոսության հեղինակի մշակած առաջադրանքները, էլեկտրոնային խաղ-վարժությունների համալիրը սովորողներից պահանջում են իրականացնել խոսքային ակտիվ գործունեություն: Շահեկան է համարվել այսպիսի իրողության ուսումնասիրումն իրականացնել վերլուծական-համադրական մեթոդով՝ առաջադիր գործընթացում առաջնային համարելով սովորողների գործուն մասնակցությունը, լեզվական իրողությունների ինքնուրույն վերլուծությունն ու համադրումը: Այս ամենը աշակերտներին տանում է մտավոր որոնումների հարթակ՝ նրանց մղելով ընդարձակ դատողություններով ներկայացնելու սեփական մտքերն ու մտահանգումները, մանկավարժական գործուն հաղորդակցումը:

Տաթևիկ Ենոքյանի «Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորումը մայրենիի դասերին» թեմայով ատենախոսությունն իր ամբողջության մեջ արդիական է. նրա դրույթները լիուլի կարող են կիրառվել արդի հանրակրթական համակարգում: Այն շարադրված է նյութի համակողմանի իմացությամբ, և նկատելի է, որ հեղինակը քաջ գիտի իր առաջադիր հիմնահարցի էությունը: Տ. Ենոքյանի սույն ատենախոսությունը կարող է հիմք հանդիսանալ համատիպ ուսումնասիրությունների համար: Այն կարող է օգտակար լինել ուսուցիչներին և ուսանողներին:

Նշելի է, որ ատենախոսի հարցադրումները պատճառաբանված են, եզրահանգումները՝ գիտականորեն համոզիչ:

Ատենախոսությունը դիտարկելով իր ընդհանուր ամբողջության մեջ՝ նկատելի են բնութագրական այլ հատկանիշներ:

1. Ուշագրավ է, որ ատենախոսն ունի մանկավարժական-մեթոդական իրողությունները դասդասելու, դրանք համեմատելու և հակադրելու կարողություններ:
2. Խնամքով է կառուցված ատենախոսության օգտագործված գրականության ցանկը: Հեղինակն ըստ հարկի օգտվում է այդ աղբյուրներից, որոնք

գիտական մեկնաբանությանը հաղորդում են հավաստիություն և ստուգություն:

Աշխատանքն ավելի կատարյալ և անթերի տեսնելու ցանկությամբ կուզենայինք նշել մեկ-երկու նկատառում:

1. Շահեկան կլիներ դիտարկել մայրենիի ինքնուրույն ընթերցանության բաղադրիչը՝ որպես կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման ուղի, հատկապես որ բոլոր դասարանների համար գործածության լայն հնարավորություններ ունեն այդ ձեռնարկները՝ համապատասխան մեթոդական հենքով:

2. Ծրագրային պահանջ է տարբեր առարկաների ինտեգրման հնարավորությունները դիտարկելը: Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացում էական նշանակություն ունեն լեզվական և արտալեզվական գործոնները: Թատրոնի և ժեստային համակարգի նախագծային աշխատանքների իրականացումը կարող է լայն հնարավորություններ ստեղծել հիմնախնդրի դիտարկման առումով, թեպետև ատենախոսը որոշ չափով անդրադարձ է կատարել մնջախաղի ընձեռած հնարավորություններին:

3. Կարծում ենք՝ աշխատանքը կշահեր, եթե փորձարարական որոշ դասեր իրականացվեին էլեկտրոնային գրատախտակի կիրառմամբ:

Այս նկատառումները, անշուշտ, չեն ստվերում աշխատանքի ելակետային դրույթները, ուստիև սկզբունքային նշանակություն չունեն և հեշտ շտկելի են:

Ընդհանուր եզրակացությունն այն է, որ Տաթևիկ Ենոքյանի «Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորումը մայրենիի դասերին» խորագրով ատենախոսությունն ունի տեսական և գործնական կարևոր նշանակություն, գիտական որոշակի նյութ կարող է տալ մայրենիի դասավանդման մեթոդիկային: Այն բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի պահանջները, համապատասխանում է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանաշնորհման 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.02 -«Դասավանդման և ուսուցման մեթոդիկա

(մայրենի)» մասնագիտության թվանիշին: Ատենախոսության հեղինակը՝ Տաթևիկ Վարդանի Ենոքյանը, միանգամայն արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի իր հայցած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Ա. Գալստյան

Հաստատում եմ պրոֆ. Ա. Գալստյանի
ստորագրությունը:

ՀՊՄՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր՝
գիտական քարտուղար, մանկ. գիտ. թեկն., դոցենտ Մ. Իսպիրյան
19. 10. 2023 թ.